

Կ-695-24.07.2020-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝

1. «ներքին» բառից հետո լրացնել «(լոկալ)» բառը.

2. «աշխատանքային» բառից հետո լրացնել «,քաղաքացիաիրավական» կետադրական նշանը և բառը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում «նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն)» բառերը փոխարինել «նախարարության (այսուհետ՝ նախարարություն) իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից» բառերով.

2. 7-րդ մասում «նախարարությունը» բառերը փոխարինել «նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալությունը» բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել.

2. 2-րդ մասի առաջին նախադասության մեջ.

1) «հաշվարկային դրույքի» բառերից հետո լրացնել «և բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի» բառերը.

2) «նախագծերը» բառից հետո լրացնել «,պետական և համայնքային բյուջեների վերաբաշխման, ինչպես նաև բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման եւ լուծարման վերաբերյալ

ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը» կետադրական նշանը և բառերը:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածում լրացնել 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Կառավարության, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառում իրավական ակտ ընդունելու լիազորություն ունեցող մարմնի կողմից՝ քաղաքացիական ավիացիայի բնագավառում ընդունվող իրավական ակտերի հավելվածները կարող են շարադրվել նաև օտար լեզվով:»:

Հոդված 5. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն .

«Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ կարող է ընդունվել նաև այն օրենսդրական ակտի հիման վրա, որը ընդունվել սակայն դեռևս ուժի մեջ չի մտել, եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ:»:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասություններով.

«Կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք բաժանվում են տեքստից միջակետով: Ենթակետերը՝ համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք բաժանվում են տեքստից փակագծով: Պարբերությունները համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով, որոնք բաժանվում են տեքստից միջակետով:»:

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածի՝

1. 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«5. Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:

2. 6-րդ մասից հանել «այլ» բառը:

Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ.

«Այլ իրավական ակտերում ակտի բնույթի մասին նշումը կատարվում է «Ա»՝ անհատական իրավական ակտի դեպքում, «Լ»՝ ներքին (լոկալ) իրավական ակտի դեպքում:»:

Հոդված 9. Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը» բառերը փոխարինել «Կառավարության կողմից սահմանված պաշտոնական թարգմանության գործառույթ կատարող կազմակերպության ղեկավարը» բառերով:

Հոդված 10. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1. 4-րդ մասից հանել «, ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված նորմատիվ իրավական ակտերը».

2. լրացնել 3.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«3.1. Պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի օրինակը կամ դրա համապատասխան քաղվածքը հասցեատերերին առձեռն հանձնելու օրվան հաջորդող օրվանից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում, եթե ակտի հասցեատերերը մեկից ավել են, ապա յուրաքանչյուր հասցեատիրոջ համար ակտն ուժի մեջ է մտնում այն իրեն տրամադրելու պահից:

3. 7-րդ մասի՝ առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1) «7. Ներքին իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե դրանով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ, կամ համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:»:

2) երկրորդ նախադասությունը հանել:

Հոդված 11. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 24. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի ակտերը

1. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի ակտերը, «Եվրասիական տնտեսական միության մասին» միջազգային պայմանագրին համապատասխան, Հայաստանի Հանրապետության տարածքում ենթակա են անմիջական կիրառության:

2. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի ակտերը «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 110-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն թարգմանվելուց հետո Կառավարության կողմից սահմանված իրավասու մարմնի կողմից ուղարկվում են հրապարակման:

3. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի ակտերը թարգմանության, հրապարակման ուղարկելու և հրապարակման կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 12. Օրենքում լրացնել 5.1-ին գլուխ հետևյալ բովանդակությամբ.

« Գ Լ ՈՒ Խ 5.1

ՈԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱխԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 27.1. Ռազմական և արտակարգ դրության հայտարարելու մասին որոշումների և դրանց առնչվող իրավական ակտերի նախագծերի փորձաքննության, հանրային քննարկման և այդ ակտերի ուժի մեջ մտնելու առանձնահատկությունները

1. Ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու մասին Կառավարության որոշումների նախագծերը, ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ պայմանավորված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ենթակա չեն պարտադիր փորձաքննության և հանրային քննարկման: Ընդ որում, սույն մասում նշված նախագծերը դրանք մշակող կամ ընդունող մարմնի նախաձեռնությամբ կարող են դրվել հանրային քննարկման՝ այդ մարմինների կողմից սահմանված ժամկետով:

2. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու մասին Կառավարության որոշումներն ուժի մեջ են մտնում համապատասխանաբար՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ

օրենքներով սահմանված կարգով հրապարակվելուց հետո՝ անմիջապես, եթե այդ ակտերով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:

3. Ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ պայմանավորված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում ակտն ընդունած մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակման պահից, եթե այդ ակտերով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված նորմատիվ իրավական ակտերը հրապարակումից հետո նույն օրն ուղարկվում են պաշտոնական հրապարակման:

5. Ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված օրենքները կարող են ուժի մեջ մտնել պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես, դրանցով նախատեսված լինելու դեպքում:

6. Ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ պայմանավորված անհատական կամ ներքին իրավական ակտն ուժի մեջ է մտնում ակտի հասցեատիրոջը տրամադրելու (կամ օրենսդրությամբ սահմանված կարգով իրազեկելու) պահից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում, եթե ակտի հասցեատերերը մեկից ավել են, ապա յուրաքանչյուր հաստեատիրոջ համար ակտն ուժի մեջ է մտնում այն իրեն տրամադրելու (իրազեկելու) պահից:

7. Պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող այն իրավական ակտերը, որոնք պայմանավորված են ռազմական կամ արտակարգ դրությամբ, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ, ուժի մեջ են մտնում ակտի հասցեատիրոջը տրամադրելու (կամ օրենսդրությամբ սահմանված կարգով իրազեկելու) պահից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում, եթե ակտի հասցեատերերը մեկից ավել են, ապա յուրաքանչյուր հաստեատիրոջ համար ակտն ուժի մեջ է մտնում այն իրեն տրամադրելու (իրազեկելու) պահից:»:

Հոդված 13. Օրենքի 6-րդ գլխի վերնագրից հանել «ԵՎ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ» բառերը:

Հոդված 14. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3) նորմատիվ իրավական ակտը չեղյալ ճանաչվելու դեպքում:»:

Հոդված 15. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 38.1 հոդվածով՝

«**Հոդված 38.1. Նորմատիվ իրավալան ակտը չեղյալ ճանաչելը**

1. Նորմատիվ իրավական ակտը չեղյալ է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտով, եթե այլևս նպատակահարմար չէ ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ակտի կիրառումը:»:

Հոդված 16. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «վաղ» բառը փոխարինել «ուշ» բառով:

Հոդված 17. Օրենքի 42-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասի «մարմինները» բառից հետո լրացնել «, բացառությամբ Ազգային ժողովի կողմից ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի:» կետադրական նշանը և բառերը.

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 մասով.

«4.1. Դատարանի կողմից գործը վարելուն (գործի քննությանը) վերաբերող դատավարական նորմերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում չի տրամադրվում:»:

Հոդված 18. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի ակտերը թարգմանության ուղարկելու, դրանց թարգմանության, հրապարակման ուղարկելու և հրապարակման կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում ապահովվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ընդունված

Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի ակտերի թարգմանությունը և հրապարակումը՝ Կառավարության որոշմանը համապատասխան:

4. Մինչև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումն ուժի մեջ մտնելն ընդունված Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի ակտերը Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ են դրվում հետևյալ կերպ՝

1) եթե ակտով կարգավորվող հարաբերությունը Հայաստանի Հանրապետությունում օրենքի կարգավորման առարկա է, ապա Կառավարությունը հանդես է գալիս համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ.

2) սույն մասի 1-ին կետով չնախատեսված դեպքերում Կառավարությունը իր նորմատիվ իրավական ակտով գործողության մեջ է դնում Եվրասիական տնտեսական միության մարմինների նորմատիվ իրավական բնույթի ակտը :

5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Կառավարության նորմատիվ որոշումները, որոնցով գործողության մեջ են դրվել Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի ակտերը, պահպանում են իրենց ուժը:

6. Սույն օրենքի 16-րդ հոդվածի գործողությունը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների հաղթահարման դեպքերի վրա: 2002 թվականի մայիսի 31-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածում սահմանված կանոններն ըստ հերթականության կիրառելիս՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը կիրառվում է ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմին առաջնություն տալով:

7. Մինչև 2002 թվականի մայիսի 31-ն ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում գործում են ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

8. Մինչև 2002 թվականի մայիսի 31-ն ուժի մեջ մտած եւ 2002 թվականի մայիսի 31-ից մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի

նորմերի միջև հակասության դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

9. 2002 թվականի մայիսի 31-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ուժի մեջ մտած և սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև հակասության դեպքում գործում են ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

10. Մինչև 2002 թվականի մայիսի 31-ն ուժի մեջ մտած և սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

Կ-695-24.07.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~Հոդված 1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ:~~

~~«Ազգային ժողովի պատգամավորների կամ խմբակցությունների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվող օրենքների կամ Ազգային ժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկման իրականացման կարգը սահմանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով»:~~

Հոդված 12. Օրենքի Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝

1) ~~«ներքին»~~ բառից հետո լրացնել «(լոկալ)» բառը.

2) ~~«աշխատանքային»~~ բառից հետո լրացնել «,քաղաքացիաիրավական» բառը կետադրական նշանը և բառը:

~~Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «15 օր է» բառերից հետո լրացնել «, բացառությամբ ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում սահմանափակումների սահմանմանը կամ կիրառմանն ուղղված օրենքների նախագծերի հանրային քննարկումների, որոնց տեւողությունը առնվազն 3 օր է»:~~

Հոդված 24. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում «նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն)» բառերը փոխարինել «նախարարության (այսուհետ՝ նախարարություն) իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից» բառերով.

2. 7-րդ մասում «նախարարությունը» բառերը փոխարինել «նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալությունը» բառերով:

Հոդված 35. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը ուժի կորցրած ճանաչել.

2.-2-րդ մասի առաջին նախադասության մեջ.

1) «հաշվարկային դրույքի» բառերից հետո լրացնել «և բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի» բառերը.

2) «նախագծերը» բառից հետո լրացնել «պետական եւ համայնքային բյուջեների վերաբաշխման, ինչպես նաեւ բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների եւ պետական ոչ առեւտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման եւ լուծարման վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը» ~~բառերը~~ կետադրական նշանը և բառերը:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածում լրացնել 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Կառավարության, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառում իրավական ակտ ընդունելու լիազորություն ունեցող մարմնի կողմից քաղաքացիական ավիացիայի բնագավառում ընդունվող իրավական ակտերի հավելվածները կարող են շարադրվել նաև օտար լեզվով:»:

Հոդված 56. Օրենքի 13-րդ հոդվածի ~~համ~~ 1-ին մասի վերջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն ~~լրացնել 5.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.~~

5.1.—«Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ կարող է ընդունվել նաև այն օրենսդրական ակտի հիման վրա, որը ընդունվել սակայն դեռևս ուժի մեջ չի մտել, եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ:»:

Հոդված 76. Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր ~~նախադասությամբ~~ նախադասություններով.

«Կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք բաժանվում են տեքստից միջակետով: Ենթակետերը՝ համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք բաժանվում են տեքստից փակագծով: Պարբերությունները համարակալվում են հայերեն հայերենի փոքրատառերով, որոնք բաժանվում են տեքստից միջակետով:»:

Հոդված 87. Օրենքի 18-րդ հոդվածի՝

1) ~~չ~~ 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«5. Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:

2) 6-րդ մասից հանել «այլ» բառը:

Հոդված 89. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ.

«Այլ իրավական ակտերում ակտի բնույթի մասին նշումը կատարվում է «Ա»՝ անհատական իրավական ակտի դեպքում, «Լ»՝ ներքին (լոկալ) իրավական ակտի դեպքում:»:

Հոդված 109. Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող նախարարը» բառերը փոխարինել «Կառավարության կողմից սահմանված պաշտոնական թարգմանության գործառույթ կատարող կազմակերպության ղեկավարը» բառերով:

Հոդված 110. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասից հանել «, ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված նորմատիվ իրավական ակտերը».

2. լրացնել 3.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«3.1. Պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի օրինակը կամ դրա համապատասխան քաղվածքը հասցեատերերին առձեռն հանձնելու օրվան հաջորդող օրվանից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:—Ընդ որում, եթե ակտի հասցեատերերը մեկից ավել են, ապա յուրաքանչյուր հասցեատիրոջ համար ակտն ուժի մեջ է մտնում այն իրեն տրամադրելու պահից:

3. 7-րդ մասի՝ առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1) «7.—Ներքին իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե դրանով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ, կամ համապատասխան անձանց պատշաճ կարգով հրազեկելու օրվան հաջորդող օրվանից:»:

2) երկրորդ նախադասությունը հանել:

24) լրացնել 7.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

~~«7.18. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափը սահմանելուն ուղղված՝ կենտրոնական բանկի խորհրդի որոշումները, ֆինանսական շուկաներում զգալի ցնցումների, կամ դրանց տեղի ունենալու իրական վտանգի, կամ ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարված լինելու դեպքերում՝ բանկերի տնտեսական նորմատիվների սահմանման եւ ֆինանսական գործառնությունների սահմանափակումների վերաբերյալ որոշումները հրապարակվում են նաեւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում, իսկ համացանցի բացակայության դեպքում՝ կապի այլ միջոցներով, ինչը համարվում է սույն օրենքի հմաստով պաշտոնական հրապարակում եւ դրանից հետո այդ ակտերը կարող են ուժի մեջ մտնել:»:~~

Հոդված 4211. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

~~«Հոդված 24. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի որոշումները ակտերը~~

1. Եվրասիական տնտեսական միության ~~Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի եւ~~ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ~~(այսուհետ՝ Եվրասիական տնտեսական միության մարմիններ)~~ նորմատիվ իրավական բնույթի ակտերը, «Եվրասիական տնտեսական միության մասին» միջազգային պայմանագրին համապատասխան, Հայաստանի Հանրապետության տարածքում ենթակա են անմիջական կիրառության:

2. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մարմինների նորմատիվ իրավական բնույթի ակտերը «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 110-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն թարգմանվելուց հետո Կառավարության կողմից սահմանված իրավասու մարմնի կողմից ուղարկվում են հրապարակման:

3. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մարմինների նորմատիվ իրավական բնույթի ակտերը թարգմանության, հրապարակման ուղարկելու եւ հրապարակման կարգը սահմանում է Կառավարությունը:

~~Հոդված 13. Օրենքի 25-րդ հոդվածը՝~~

~~1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 3.1 մասով.~~

~~«3.1. Միասնական կայքում հրապարակվելուն զուգահեռ նորմատիվ իրավական ակտերը հրապարակվում են՝ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի տեղեկագիր», «Համայնքի իրավական ակտերի տեղեկագիր» եւ «Երեւանի իրավական ակտերի տեղեկագիր» պարբերականներում հրատարակվելու միջոցով:»:~~

~~2) 4-րդ մասում «հրապարակումն» բառը փոխարինել «հրապարակումը եւ հրատարակումն» բառերով:~~

~~3) 6-րդ մասում «Եւ պաշտոնական ինկորպորացիայի կարգը» բառերը փոխարինել «պաշտոնական ինկորպորացիայի եւ տեղեկագրերում հրատարակման կարգերը» բառերով կեստադրական նշանը և բառերով:~~

Հոդված 1312. Օրենքում լրացնել 5.1-ին գլուխ հետևյալ բովանդակությամբ.

« Գ Լ ՈՒ Խ 5.1

ՈԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 27.1. Ռազմական և արտակարգ դրության հայտարարելու մասին որոշումների և դրանց առնչվող իրավական ակտերի նախագծերի փորձաքննության, հանրային քննարկման և այդ ակտերի ուժի մեջ մտնելու առանձնահատկությունները

1. Ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու մասին Կառավարության որոշումների նախագծերը, ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ պայմանավորված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ենթակա չեն պարտադիր փորձաքննության և հանրային քննարկման: Ընդ որում, սույն մասում նշված նախագծերը դրանք մշակող կամ ընդունող մարմնի նախաձեռնությամբ կարող են դրվել հանրային քննարկման՝ այդ մարմինների կողմից սահմանված ժամկետով:

2. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու մասին Կառավարության որոշումներն ուժի մեջ են մտնում համապատասխանաբար՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով հրապարակվելուց հետո՝ անմիջապես, եթե այդ ակտերով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:

3. Ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների,

կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ պայմանավորված ենթաօրենսդրական նորմատիվ հրավական ակտերն ուժի մեջ են մտնում ակտն ընդունած մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակման պահից, եթե այդ ակտերով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված նորմատիվ հրավական ակտերը հրապարակումից հետո նույն օրն ուղարկվում են պաշտոնական հրապարակման:

5. Ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված օրենքները կարող են ուժի մեջ մտնել պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես, դրանցով նախատեսված լինելու դեպքում:

6. Ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ պայմանավորված անհատական կամ ներքին հրավական ակտն ուժի մեջ է մտնում ակտի հասցեատիրոջ տրամադրելու (կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հրազեկելու) պահից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում, եթե ակտի հասցեատերերը մեկից ավել են, ապա յուրաքանչյուր հասցեատիրոջ համար ակտն ուժի մեջ է մտնում այն իրեն տրամադրելու (հրազեկելու) պահից:

7. Պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող այն հրավական ակտերը, որոնք պայմանավորված են ռազմական կամ արտակարգ դրությամբ, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ, ուժի մեջ են մտնում ակտի հասցեատիրոջ տրամադրելու (կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հրազեկելու) պահից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում, եթե ակտի հասցեատերերը մեկից ավել են, ապա յուրաքանչյուր հասցեատիրոջ համար ակտն ուժի մեջ է մտնում այն իրեն տրամադրելու (հրազեկելու) պահից:»:

Հոդված 4413. Օրենքի 6-րդ գլխի վերնագրից հանել «ԵՎ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ» բառերը:

Հոդված 1514. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3) նորմատիվ իրավական ակտը չեղյալ ճանաչվելու դեպքում:»:

Հոդված 1615. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 38.1 հոդվածով՝

«**Հոդված 38.1. Նորմատիվ իրավական ակտը չեղյալ ճանաչելը**

1. Նորմատիվ իրավական ակտը չեղյալ է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտով, եթե այլևս նպատակահարմար չէ ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ակտի կիրառումը:»:

Հոդված 1716. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «վաղ» բառը փոխարինել «ուշ» բառով:

Հոդված 1817. Օրենքի 42-րդ հոդվածի՝

1) ~~4-րդ~~ մասի «մարմինները» բառից հետո լրացնել «,բացառությամբ Ազգային ժողովի կողմից ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի:» **բառերը կետադրական նշանը և բառերը.**

2) ~~լրացնել~~ հետևյալ բովանդակությամբ 4.1 մասով.

«4.1. Ղատարանի կողմից գործը վարելուն (գործի քննությանը) վերաբերող դատավարական նորմերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում չի տրամադրվում~~Հայաստանի Հանրապետության Ղատական օրենսգիրք սահմանադրական օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության եւ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերի, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի, «Սնանկության մասին» օրենքով նախատեսված՝ դատարանի կողմից գործը վարելուն (գործի քննությանը) վերաբերող դրույթների վերաբերյալ պաշտոնական պարզաբանում չի տրամադրվում:~~»:

Հոդված 1918. Անցումային եւ եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման ը հաջորդող օրվան ից հաջորդող օրը:

2. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մարմինների՝ նորմատիվ իրավական բնույթի ակտերը թարգմանության ուղարկելու, դրանց թարգմանության, հրապարակման ուղարկելու եւ հրապարակման կարգը

սահմանելու մասին Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում ապահովվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ընդունված Եվրասիական տնտեսական միության [Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մարմինների](#) նորմատիվ իրավական բնույթի ակտերի թարգմանությունը եւ հրապարակումը՝ Կառավարության որոշմանը համապատասխան:

4. Մինչև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումն ուժի մեջ մտնելն ընդունված Եվրասիական տնտեսական միության [Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մարմինների](#) նորմատիվ իրավական բնույթի ակտերը Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ են դրվում հետևյալ կերպ՝

1) եթե ակտով կարգավորվող հարաբերությունը Հայաստանի Հանրապետությունում օրենքի կարգավորման առարկա է, ապա Կառավարությունը հանդես է գալիս համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ.

2) սույն մասի 1-ին կետով չնախատեսված դեպքերում Կառավարությունը իր նորմատիվ իրավական ակտով գործողության մեջ է դնում Եվրասիական տնտեսական միության մարմինների նորմատիվ իրավական բնույթի ակտը :

5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Կառավարության նորմատիվ որոշումները, որոնցով գործողության մեջ են դրվել Եվրասիական տնտեսական միության [Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մարմինների](#) նորմատիվ իրավական բնույթի ակտերը, պահպանում են իրենց ուժը:

6. Սույն օրենքի [4716](#)-րդ հոդվածի գործողությունը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների հաղթահարման դեպքերի վրա: 2002 թվականի մայիսի 31-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածում սահմանված կանոններն ըստ հերթականության կիրառելիս՝ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը կիրառվում է ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմին առաջնություն տալով:

7. Մինչև 2002 թվականի մայիսի 31-ն ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում գործում են ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

8. Մինչև 2002 թվականի մայիսի 31-ն ուժի մեջ մտած եւ 2002 թվականի մայիսի 31-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև հակասության դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

9. 2002 թվականի մայիսի 31-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ուժի մեջ մտած եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև հակասության դեպքում գործում են ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

10. Մինչև 2002 թվականի մայիսի 31-ն ուժի մեջ մտած եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱխԱԳԾԵՐԻ (Կ-695-24.07.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդված:	Նախագծի 2-րդ հոդվածում 1) «Օրենքի» բառը փոխարինել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)» բառերով» 2) 2-րդ մասում «բառը» բառը փոխարինել «կետադրական նշանը և բառը» բառերով:	Նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված:	Նախագծից հանել 3-րդ հոդվածը:	Նախագծից հանվել է 3-րդ հոդվածը: Արդյունքում բոլոր հոդվածների համարակալումները փոխվել են:	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «2. 7-րդ մասում «նախարարությունը» բառերը փոխարինել «նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալությունը» բառերով:»:	Նախագիծը լրացվել է 4-րդ հոդվածի 2-րդ մասով:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել.	Նախագծի 5-րդ հոդվածը վերաշարադրվել է:	Ընդունվել է

			<p>2.2-րդ մասի առաջին նախադասության մեջ.</p> <p>1) «հաշվարկային դրույքի» բառերից հետո լրացնել «և բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի» բառերը.</p> <p>2) «նախագծերը» բառից հետո լրացնել «,պետական եւ համայնքային բյուջեների վերաբաշխման, ինչպես նաեւ բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների եւ պետական ոչ առեւտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման եւ լուծարման վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը» կետադրական նշանը և բառերը:»:</p>		
5.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	<p>Նախագիծը լրացնել նոր 4-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածում լրացնել 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«4. Կառավարության, ինչպես նաև Կառավարության համաձայնությամբ՝ քաղաքացիական ավիացիայի</p>	Նախագիծը լրացվել է նոր 4-րդ հոդվածով: Արդյունքում բոլոր հոդվածների համարակալումները փոխվել են:	Ընդունվել է

			բնագավառում իրավական ակտ ընդունելու լիազորություն ունեցող մարմնի կողմից՝ քաղաքացիական ավիացիայի բնագավառում ընդունվող իրավական ակտերի հավելվածները կարող են շարադրվել նաև օտար լեզվով:»:		
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածում լրացվող փոփոխությունը նախատեսե ոչ թե 5.1 մասով, այլ լրացնել 1-ին մասի վերջին նախադասությունից հետո որպես նոր նախադասություն:	Նախագծի 6-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածում 1) «նախադասությամբ» բառը փոխարինել «նախադասություններով» բառով, 2) «հայերեն» բառը փոխարինել «հայերենի այբուբենի» բառերով:	Նախագծի 7-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում ««օրենսգիրք» բառը» բառերից հետո լրացնել «, եթե վերնագիրը չի ներառում այն» բառերը:	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ բովանաղությամբ. « Օրենքի 23-րդ հոդվածում՝ 1. 4-րդ մասից հանել «, ռազմական կամ արտակարգ դրությամբ	Նախագծի 11-րդ հոդվածը վերախմբագրվել է:	Ընդունվել է

			<p>պայմանավորված նորմատիվ իրավական ակտերը».</p> <p>2. լրացնել 3.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝ «3.1. Պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի օրինակը կամ դրա համապատասխան քաղվածքը հասցեատերերին առձեռն հանձնելու օրվան հաջորդող օրվանից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում, եթե ակտի հասցեատերերը մեկից ավել են, ապա յուրաքանչյուր հասցեատիրոջ համար ակտն ուժի մեջ է մտնում այն իրեն տրամադրելու պահից:</p> <p>3. 7-րդ մասի՝ առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>1) «7. Ներքին իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե դրանով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ, կամ համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:»:</p> <p>2) երկրորդ նախադասությունը հանել:»:</p>		
10.	ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդված	<p>Նախագծի 12-րդ հոդվածից</p> <p>1) հանել «Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի» բառերը.</p> <p>2) «որոշումները» բառը փոխարինել «ակտերը» բառով.</p>	Նախագծի 12-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է

			<p>3) 1-ին մասից հանել «(այսուհետ՝ Եվրասիական տնտեսական միության մարմիններ)» բառերը.</p> <p>4) 2-րդ և 3-րդ մասերում «մարմինների» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի» բառերով:</p>		
11.	ՀՀ կառավարություն	Նախագծի 13-րդ հոդված	Նախագծից հանել 13-րդ հոդվածը:	Նախագծից հանվել է 13-րդ հոդվածը:	Ընդունվել է
12.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	<p>Նախագիծը լրացնել նոր 12-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Հոդված 12. Օրենքում լրացնել 5.1-ին գլուխ հետևյալ բովանդակությամբ.</p> <p style="text-align: center;">« Գ Լ ՈՒ Խ 5.1</p> <p style="text-align: center;">ՈԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌՆՉԿՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p> <p>Հոդված 27.1. Ռազմական և արտակարգ դրության հայտարարելու մասին որոշումների և դրանց առնչվող</p>	Նախագիծը լրացվել է նոր 12-րդ հոդվածով:	Ընդունվել է

			<p>իրավական ակտերի նախագծերի փորձաքննության, հանրային քննարկման և այդ ակտերի ուժի մեջ մտնելու առանձնահատկությունները</p> <p>1. Ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու մասին Կառավարության որոշումների նախագծերը, ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ պայմանավորված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ենթակա չեն պարտադիր փորձաքննության և հանրային քննարկման: Ընդ որում, սույն մասում նշված նախագծերը դրանք մշակող կամ ընդունող մարմնի նախաձեռնությամբ կարող են դրվել հանրային քննարկման՝ այդ</p>		
--	--	--	--	--	--

			<p>մարմինների կողմից սահմանված ժամկետով:</p> <p>2. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու մասին Կառավարության որոշումներն ուժի մեջ են մտնում համապատասխանաբար՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով հրապարակվելուց հետո՝ անմիջապես, եթե այդ ակտերով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:</p> <p>3. Ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ պայմանավորված ենթաօրենսդրական նորմատիվ</p>		
--	--	--	---	--	--

			<p>իրավական ակտերն ուժի մեջ են մտնում ակտն ընդունած մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակման պահից, եթե այդ ակտերով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:</p> <p>4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված նորմատիվ իրավական ակտերը հրապարակումից հետո նույն օրն ուղարկվում են պաշտոնական հրապարակման:</p> <p>5. Ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված օրենքները կարող են ուժի մեջ մտնել պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես, դրանցով նախատեսված լինելու դեպքում:</p> <p>6. Ռազմական կամ արտակարգ դրությամբ պայմանավորված, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների</p>		
--	--	--	---	--	--

			<p>գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմամբ պայմանավորված անհատական կամ ներքին իրավական ակտն ուժի մեջ է մտնում ակտի հասցեատիրոջը տրամադրելու (կամ օրենսդրությամբ սահմանված կարգով իրազեկելու) պահից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում, եթե ակտի հասցեատերերը մեկից ավել են, ապա յուրաքանչյուր հասցեատիրոջ համար ակտն ուժի մեջ է մտնում այն իրեն տրամադրելու (իրազեկելու) պահից:</p> <p>7. Պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող այն իրավական ակտերը, որոնք պայմանավորված են ռազմական կամ արտակարգ դրությամբ, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի</p>		
--	--	--	--	--	--

			փոխադրմամբ, ուժի մեջ են մտնում ակտի հացեատիրոջը տրամադրելու (կամ օրենսդրությամբ սահմանված կարգով իրազեկելու) պահից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում, եթե ակտի հացեատերերը մեկից ավել են, ապա յուրաքանչյուր հաստեատիրոջ համար ակտն ուժի մեջ է մտնում այն իրեն տրամադրելու (իրազեկելու) պահից:»:		
13.	ՀՀ կառավարություն	Նախագծի 18-րդ հոդված	Նախագծի 18-րդ հոդվածի 1) 1-ին մասում «բառերը» բառը փոխարինել «կետադրական նշանը և բառերը» բառերով: 2) 2-րդ մասում օրենսգրքերի անվանումներից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը.	Նախագծի 18-րդ հոդվածը լրամշակվել է:	Ընդունվել է մասնակի
14.	ՀՀ կառավարություն	Նախագծի 19-րդ հոդված	Նախագծի 19-րդ հոդվածի 1) 1-ին մասում «հրապարակման օրվան հաջորդող օրը» բառերը փոխարինել «հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով: 2) 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում «մարմինների» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի» բառերով:	Նախագծի 19-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է

<p>15.</p>	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ</p>	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի անվանման մեջ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերից հետո լրացնել «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ» բառը:</p>	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը հանվել է օրենքների փաթեթից</p>	<p>Չի ընդունվել</p>
<p>16.</p>	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված և 2-րդ հոդված</p>	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «(այսուհետ՝ Օրենք)» բառերը հանել, իսկ 2-րդ հոդվածում «հրապարակման օրվան հաջորդող օրը» բառերը փոխարինել «հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:</p>	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը հանվել է օրենքների փաթեթից</p>	<p>Չի ընդունվել</p>
<p>17.</p>	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ</p>	<p>Օրենքների փաթեթում ներառել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ՝ հետևյալ բովանդակությամբ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p>	<p>«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներառվել է օրենքների նախագծերի փաթեթում:</p>	<p>Ընդունվել է</p>

			<p>Հողված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «կատարվում է պետության պաշտպանության,» բառերից հետո լրացնել «այդ թվում՝ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման գործընթացի շրջանակներում,» բառերով:</p> <p>Հողված 2. Օրենսգրքի 166-րդ հոդվածը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝</p> <p>«Պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների,</p>		
--	--	--	---	--	--

			<p>կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման գործընթացի շրջանակներում ամենամյա արձակուրդից հետո կանչելու դեպքում աշխատողի համաձայնությունը չի պահանջվում:»:</p> <p>Հոդված 3. Եզրափակիչ մաս</p> <p>1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:</p>		
18.	«Իմ քայլը» խմբակցությունյան անդամ Վահագն Հովակիմյան	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված:	Նախագծից հանել 1-ին հոդվածը:	Նախագծից հանվել է 1-ին հոդվածը: Արդյունքում բոլոր հոդվածների համարակալումները փոխվել են:	Ընդունվել է

19.	«Իմ քայլը» խմբակցությունյա ն անդամ Վահագն Հովակիմյան	««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը հանել օրենքների փաթեթից	««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը հանվել է օրենքների փաթեթից	Ընդունվել է
20.	«Իմ քայլը» խմբակցության անդամ Վլադիմիր Վարդանյան	Նախագծի 18-րդ հոդված	Նախագծի 18-րդ հոդվածի 1) 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ «2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 մասով. «4.1. Դատարանի կողմից գործը վարելուն (գործի քննությանը) վերաբերող դատավարական նորմերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում չի տրամադրվում:»:	Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասը լրամշակվել է:	Ընդունվել է